

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից

2018 թվականի երկրորդ եռամսյակում առցանց դրամաշնորհային համակարգով հասարակական կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկատվություն

| | |
|--|--|
| Կազմակերպության անվանումը | «ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում» հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | ք. Երևան, Ա. Մանուկյան 1 |
| Ծրագրի անվանումը | «Գյուղական համայնքներում երիտասարդների զբաղվածության խթանումը՝ կայուն և օրգանիկ գյուղատնտեսության միջոցով» ուսուցողական դասընթաց |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | «ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում» ՀԿ-ն իր գործունեության ընթացքում մշտապես կազմակերպել է գիտակրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ՝ սեմինարներ, դասընթացներ, գիտական դպրոցներ և այլն: Սույն ծրագիրն իրենից ներկայացնում է ուսուցողական դասընթաց, որի նպատակն է Տավուշի մարզի երիտասարդների զբաղվածության և աղքատության խնդիրների մեղմումը՝ գյուղական համայնքներում գործարարության հմտություններ զարգացնելու և գրագետ գյուղացիական տնտեսություն կառուցելու անհրաժեշտ գիտելիքներ փոխանցելու միջոցով: Ծրագրի թիրախ խումբը՝ Դիլիջան խոշորացված համայնքի 6 վարչական շրջանների (Գոշ, Աղավնավանք, Խաչարձան, Հովք, Հաղարծին, Թեղուտ) երիտասարդներն են: Ծրագրի նպատակն է զարգացնել ՀՀ գյուղական համայնքներում բնակվող երիտասարդների գործարարության հմտությունները՝ գրագետ և օրգանական գյուղացիական տնտեսություն կառուցելու նպատակով: Նշված նպատակին հասնելու համար առաջ են քաշվում հետևյալ խնդիրները. 1. Մասնագիտորեն հիմնավորված օրգանական գյուղացիական տնտեսություն կառուցելու հմտությունների փոխանցում, 2. Արդյունավետ և խելամիտ գյուղատնտեսությամբ զբաղվողների քանակի ավելացում, 3. Գյուղաբնակ բնակչության շրջանում բիզնես մտածելակերպի սերմանում (ինչպես կարող են իրենց տնտեսությունը վերածել բիզնեսի և ինչ հնարավոր շուկաներ են առկա), 4. Ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացում (կատարել ճիշտ ֆինանսական հաշվարկ, գրագետ կառավարել տնտեսությունը): |

| | |
|--|--|
| Կազմակերպության անվանումը | «Հանուն հայ զինվորի» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 2/9 |
| Ծրագրի անվանումը | ԱԶԳ-ԲԱՆԱԿ-2018 |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | Ծրագրի նպատակը՝ Նպաստել ազգ-բանակ և բանակ հասարակություն կապի ամրապնդմանն ու Արցախի Հանրապետությունում զինվորական ծառայություն իրականացնող շուրջ 10000 զինվորների բարոյահոգեբանական մակարդակի բարձրացմանը, իրազեկվածության մակարդակի բարձրացմանը «Տեղեկատվական անվտանգություն» թեմայով: Որպես ոչ ուղղակի նպատակ է հանդիսանում նաև Արցախ մեկնող ՀԿ-ի անդամների հայրենաճանաչության բարձրացումը: Սեմինարը կանցկացվի որ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ, որի ընթացքում նախատեսվում է ինչպես բանախոսություն սեմինարավարի կողմից, այնպես էլ հարց ու պատասխան, ինտերակտիվ քննարկում, զրույց առանց տեսախցիկների: Կքննարկվեն հետևյալ հարցերը՝ 1. Ինչ է տեղեկատվական անվտանգությունը: 2. Որոնք են կիրբեր անվտանգության հիմնական սկզբունքները: 3. Ինչ հետեանքներ այն կարող է ունենալ պատերազմական իրավիճակներում: 4. Ինչպես պաշտպանել տեղեկատվությունը: 5. Ինչպիսին կարող են լինել թշնամու գործողությունները եւ ինչպես դրանց դիմակայել: |

| | |
|--|---|
| Կազմակերպության անվանումը | «Երիտասարդ ժողովուհիների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | ք. Երևան, Ձ. Քանաքեռցու 117/1 շ. բն 5 |
| Ծրագրի անվանումը | ««Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխություններն ու ձեռնարկատիրությամբ զբաղվելու նոր հնարավորությունները» երիտասարդական ուսուցողական դասընթաց-2 |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | «Հասարակական կազմակերպության մասին» օրենքի փոփոխություններն ու ձեռնարկատիրությամբ զբաղվելու նոր հնարավորությունները» ուսուցողական դասընթաց-2»-ի նպատակն է Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում բնակվող 52 երիտասարդների ներկայացնել «Հ4 մասին» օրենքի փոփոխությունները և դրանցով պայմանավորված՝ ձեռնարկատիրությամբ զբաղվելու նոր հնարավորությունները: Յուրաքանչյուր մարզում 4-օրյա դասընթացի արդյունքում երիտասարդներին կստանան գիտելիքներ հետևյալ թեմաների մասին. Հ4 մասին օրենսդրական փոփոխություններ 2. Հ4 կամավորների ու շահառուների ներգրավման նոր օրենսդրական կարգավորումները 3. Հ4 գրանցման իրավական կարգավորումները 4. Ձեռնարկատիրությամբ զբաղվելու նոր հնարավորությունները 5. Ի՞նչ է սոցիալական ձեռնարկատիրությունը 6. Հ4 գործունեության ոլորտում առկա սոցիալական խնդիրների բացահայտում դրանց լուծմանն ուղղված ձեռնարկատիրական գաղափարների գեներացում 7. Հայաստանում գործող ԱԶ օրինակների ներկայացում 8. Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտում ներգրավված կազմակերպությունների ներկայացում 9. Ծրագրերի մշակում և կառավարում 10. Ֆոնդհայթայթում: 11. Արտաքին հաղորդակցման մեխանիզմները: 12. Հաշվետվողականություն, հասարակայնության հետ կապեր և այլն: Ծրագրի մասնակիցները հնարավորություն կունենան դասընթացների ավարտից հետո մասնակցել «Համայնքների զարգացում՝ սոցիալական ձեռնարկատիրության միջոցով» ծրագրի շրջանակներում ստեղծված առցանց ուսուցման ծրագրին՝ ստանալով բազմակողմանի գիտելիքներ ԱԶ-ի, բիզնեսի կառավարման և այլ թիրախային թեմաներով: Դասընթացը կանցկացվի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական մեթոդների համադրությամբ: |

| | |
|--|---|
| Կազմակերպության անվանումը | «Տավուշի ինովացիոն կենտրոն» համայնքային զարգացման հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | ք. Իջևան, Նալբանդյան 8/5 |
| Ծրագրի անվանումը | Առողջությունը որպես կյանքի արժեք |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | Առողջությունը՝ որպես կյանքի արժեք» ծրագրի գործողությունները նպատակ ունեն նպաստելու Իջևան համայնքի երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի քարոզմանը և Իջևանի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողների ակտիվության բարձրացմանը՝ մասնագիտական դասընթացներ և առցանց քննարկումներ կազմակերպելու միջոցով: Ծրագրի խնդիրներն են՝ երիտասարդների շրջանում ամրապնդել առողջ ապրելակերպի գաղափարը՝ մասնագիտական դասընթացներ կազմակերպելու միջոցով, բարձրացնել Քոլեջի ուսանողների ակտիվությունը, ապահովել նրանց մասնակցությունը առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված միջոցառումների կազմակերպման գործին: Ծրագրով նախատեսված գործողությունները կնպաստեն առողջ ապրելակերպի նոր հանրային կարծիքի ձևավորմանը և երիտասարդների շրջանում ակտիվի, ծխախոտի ու թմրանյութերի օգտագործման ծավալների նվազմանը: Քանի որ Քոլեջի ուսանողների մեջ մեծ թիվ են կազմում տարածաշրջանի գյուղերի երիտասարդները, Ծրագրի արդյունքները կտարածվեն նաև Տավուշի մարզի գյուղերում: Ծրագրի շահառու հանդիսացող թիրախ խումբը Իջևանի երիտասարդական խմբերի 16-30 տարեկան 60 անդամներն են: |

| | |
|--|---|
| Կազմակերպության անվանումը | ««Կամբ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | ք. Ստեփանավան, Եկեղեցու փողոց տուն 24 |
| Ծրագրի անվանումը | ՄԵԴԻԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | «Մեդիա մասնակցություն» ծրագրի շրջանակներում կանցկացվի ուսուցողական դասընթաց, որի նպատակն է՝ նպաստել շահառու երիտասարդների անհատական և սոցիալական զարգացմանը, մասնակցային մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և երիտասարդների մեդիա մասնակցությանը համայնքային կյանքին: Ծրագիրը նպատակ ունի նաև նպաստել երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը և նոր մեդիայի միջոցով ՏԻՄ- երիտասարդություն հաղորդակցման որակի բարելավմանը, համայնքում երիտասարդների քաղաքացիական, սոցիալ-տնտեսական, թվային և մշակութային մասնակցության մակարդակի բարձրացմանը: Ծրագիրը համապատասխանում է Իջևանի երիտասարդության կարիքներին և իր շուրջը կհամախթի մեդիայով հետաքրքրված իջևանցի 25 երիտասարդի, որոնց համար 2018թ. հուլիսին Իջևանում կանցկացվի 4-օրյա դասընթաց՝ կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների համադրմամբ: Շահառուները ձեռք կբերեն գիտելիքներ և հմտություններ հետևյալ թեմաների շուրջ՝ մասնակցային կառավարման գործընթաց, մասնակցության մեխանիզմներ, տեղեկատվություն ստանալու և այն հանրայնացնելու կարգ, մեդիա մասնակցության սկզբունքներ, քաղաքացիական լրագրություն, լուսանկաչություն, նոր մեդիա և բլոգավարության հիմունքներ և այլն: Շահառուները կտեղծեն բլոգներ՝ ներկայացնելով իրենց պատրաստած լրագրողական նյութերը: Նրանք իրենց պատրաստած նյութերով կարող են համագործակցել տարբեր ՁԼՄ-ների հետ, ինչն էլ որոշակիորեն կնպաստի շահառու երիտասարդների զբաղվածության խնդրի լուծմանը և որպես քաղաքացիական լրագրողներ՝ երիտասարդների դերի ու մասնակցության մակարդակի բարձրացմանը համայնքի ու երկրի տարբեր ոլորտներում: |

| | |
|--|---|
| Կազմակերպության անվանումը | «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | ք. Երևան Նոր Արեշի 20փ., փակ. տ. 13 |
| Ծրագրի անվանումը | ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | Ներկայացվող խորագրով 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովը Կազմակերպության ավանդական դարձող ծրագրերից է, որը նպատակ է հետապնդում բացահայտել հայոց պետականության ձեռքբերումները, հիմնախնդիրները և հետագա աշխատանքները, ինչպես նաև խթանել երիտասարդ հետազոտողների գիտական հակումները: Այն միավորում է ասպիրանտների (հայցորդների), երիտասարդ և անվանի գիտնականների՝ նրանց հնարավորություն ընձեռելով ներկայացնել սեփական հետազոտությունների արդյունքները և առկա խնդիրների շուրջ կազմակերպել շահագրգիռ քննարկումներ: Ծրագրի թիրախ խումբն Արցախի, Հայաստանի ու արտասահմանյան բուհերի և գիտահետազոտական կենտրոնների՝ հասարակական գիտությունների բնագավառի ասպիրանտները, երիտասարդ ու անվանի գիտնականներն են: Ծրագրի նպատակն է խթանել ասպիրանտների ու երիտասարդ գիտնականների գիտական հակումները, նպաստել նրանց մասնագիտական զարգացմանը և քննարկել հայոց պետականության հետ կապված արդիական հիմնախնդիրներ: Գիտաժողովը տևելու է 4 օր՝ 2018թ. սեպտեմբերի 13-ից 16-ը: |

| | |
|--|--|
| Կազմակերպության անվանումը | «Երիտասարդ նորարարների և գիտնականների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | ք. Ապարան 2, Դարյան տ. 3 |
| Ծրագրի անվանումը | «ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» IV ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | <p>"Նորարարությունների կառավարում" IV միջազգային գիտական դպրոցը տեղի կունենա 2018թ.-ի մայիսի 24-ից մայիսի 27-ը Կոտայքի մարզի ք. Ծաղկաձորում: Դպրոցի հիմնական նպատակներն են՝ խրախուսել գիտական արդյունքների առևտրայնացման և նորարարական ձեռնարկատիրական գործունեության ոլորտում երիտասարդների ներգրավումը և մասնակցությունը, նրանց համար ստեղծել ինովացիոն կրթական հարթակ՝ լրացուցիչ հատուկ կրթության, գիտական և գիտատեխնիկական մշակումների առևտրայնացման հիմունքների յուրացման համար, զարգացնել նրանց բիզնես հմտությունները, նպաստել երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը և մասնագիտական աճին, աջակցել նորարարական գաղափարների առևտրայնացման ոլորտում տարբեր մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը: Դպրոցի նպատակային լսարանը ներառում է մինչև 35 տարեկան երիտասարդների, որոնք հանդիսանում են ՀՀ և արտասահմանյան ԲՈՒՀ-երի ուսանողներ, ասպիրանտներ, երիտասարդ գիտնականներ, նորարարական արտադրանք թողարկող կազմակերպությունների աշխատակիցներ, ՀՀ տարբեր զարգացման ֆոնդերի և պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, անհատներ, որոնք հետաքրքրված են գիտական և գիտատեխնիկական արդյունքների առևտրայնացմամբ: Դպրոցի ծրագրի հիմքում դրված է կրթության ոլորտում կիրառվող տարբեր մոտեցումների և բաղադրիչների համադրման սկզբունքը՝ ոչ ֆորմալ կրթության տարրեր, դասախոսություններ, անհատական և խմբային աշխատանքներ, կլոր-սեղաններ, մաստեր-դասընթացներ (master class) և ինտերակտիվ մեթոդներ:</p> |

| | |
|--|--|
| Կազմակերպության անվանումը | «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| Հասցեն | Ք. Երևան, Արշակունյաց 2, 522 գրասենյակ |
| Ծրագրի անվանումը | Թրաֆիքինգի դեմ պայքարը երիտասարդների նորարարական գաղափարների թիրախում |
| Ծրագրի համառոտ բովանդակությունը | <p>Ծրագիրը նախատեսում է դասընթաց-հանդիպում Իջևան քաղաքի 20 երիտասարդների հետ, որի ընթացքում թրաֆիքինգի կանխարգելման ոլորտում գործունեություն ծավալող 2 փորձագետների և սոցիալական գովազդի 1 փորձագետի անմիջական մասնակցությամբ նրանց կփոխանցվի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև ստացած գիտելիքները սոցիալական գովազդների միջոցով հանրությանը փոխանցելու հմտություններ: Ծրագրի վերջնարդյունքում երիտասարդների գաղափարներով մշակված սցենարների հիման վրա կպատրաստվի 2 սոցիալական հոլովակ, որոնք կտարածվեն ինչպես հանրային և մասնավոր ՁԼՄ-ներով, այնպես էլ սոցիալական ցանցերի միջոցով:</p> |